17577

Ս. Պետերբուրգի Հոգ. Ճեմարանի նախկին տեսուչ Բորիս վարդապետի խրատական գրույցը

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒ ՕԳՈՒՏԸ

(Ուղղուած աշակերտութեան)

Թուաբէնից փոխադրեց

Նիկ. ք՜ն. Բոանակեան

370.1
Բ-89

Տպարան Ս. Ե. Աւագեանի
Нахичевань н-Д.
Тип. С. Я. Авакова
1913

370.1
Բ-89

Ս. Պետերբուրգի Հոգ. Ճեմարանի նախկին
տեսուչ Բորիս վարդապետի խրատական գրոյցը

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒ ՕԳՈՒՏԸ

(Ուղղուած աշակերտուհեան)

3969
Ռուսերէնից փոխադրեց
Սիկ. ք՞ն. Բռանակեան

2001

Նոր-Նախիջևան
Տպարան Ս. Յ. Աւագեանի

Нахичевань н-Д.
Тип. С. Я. Авакова

1913

2010

8775

ՆՈՒՅՐ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ

Հայկական առաջի գիւտի 1500-ամեակի
և տպագրութեան 400 տարուայ յոբելեան-
ների առթիւ

ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՕԳՈՒՏԸ

— —

Մարդու համար կատարելութեան հասնելու գլխաւոր միջոցներից մէկն՝ կրօնա-բարոյական ու գիտական դաստիարակութիւնն և կրթութիւնն է։

Դպրոցական կրթութիւնը պատրաստում է մեզ այս կեանքի համար, իսկ սրա միջոցով էլ ապագայ կեանքի։ Ով ամենալաւ դաստիարակութիւն ու կրթութիւն է ստացել, նա գիտակցաբար և աւելի արգասաւոր կերպով կարող է գործել և ապրել երկրի վերայ. և այդ կերպով կարող է պատրաստուել նաև ապագայ կեանքի համար։ Դպրոցը բազմատեսակ միջոցներով աշակերտների հոգեկան ոյժերը վարժեցնում է, պատրաստելու նրանց ապագայ գործունէութեան և կեանքի կռուի համար։ Այս տեսակէտից աշակերտներին մենք կարող ենք նմանեցնել այն երիտասարդ զինուորներին, որոնք վարժուում են ռազմական արհեստի մէջ։ Զինուորները ձեռքերի ու ոտքերի ճարպիկ շարժման համար

ձեռք բերելով՝ այս ճարպիկութիւնից էլ պատեբազմների մէջ օգտւում են։ Հարկաւ, մենք էլ պէտք է հետևենք այն մարդին, թէ մեզ սպասում է մի մեծ գործ, բոլոր գործերից ամենանշանաւորը. այդ գործի համար մենք պարտական ենք ամեն ինչ զոհել, որի պատրաստուելու համար պէտք է աշխատենք մեր ոյժերի համեմատ, չխղճնելով ըստ առածին՝ ոչ մի քար անշարժ, եթէ միայն դրանից մեզ որ և է օգուտ կը դայ։ Թէև այդպիսի աշխատանքը մեծ լարուած ոյժեր է պահանջում, բայց սրա պատճառով մենք չը-պէտք է անձնատուր լինենք անգործութեան ու ծուլութեան։ Ընդհակառակն՝ պէտք է առաջնորդուենք այն կանոնով, որ իւրաքանչիւր ոք պարտական է ընտրել ամենակատարեալ կեանք և սպասել, որ սովորութիւնը նրան հաճելի կդարձնէ։ Ուստի պէտք է ամեն ջանք գործ դնել հասնելու այն բանին, որը մի անգամ պիտանի է ճանաչուած։

Ամօթ է, որ մարդ ներկայումս կորցնելով ժամանակը՝ ապագայում աշխատի յետ դարձնել նրան, որը արդէն անհնարին է նոյն իսկ լարուած ոյժերով։ Այստեղ, դպրոցում, ձեզ համար սկզբնանալու ժամանակ է, իսկ նրա պտուղները պիտի վայելէք դպրոցից դուրս գալուց յետոյ կեանքի մէջ։ Ինչ որ այստեղ կսկանէք, նոյնը այնտեղ կհնձէք։ Ժամանակը թանկ գնահատեցէք,

մի կորցնէք նրան իզուր տեղը, այլ ընդհակառակն՝ աշխատեցէք ձեր դասական զբաղմունքներից մնացած հանգստեան ազատ ժամերը դործադրել հարստացնելու ձեզ նոր-նոր գիտութիւններով։ Գիտութիւնը ինքն ըստ ինքեան մեծ ոյժ է, և այդ պատճառով ուժեղ է դարձնում այն մարդուն, որը ունի այդ և գիտէ պատշաճաւոր կերպով օգտուել նրանից։ Ով լաւագոյն որակութիւններով առաւել գիտութիւն ունի, այդպիսի մարդը աւելի լաւ պիտուած է կեանքի կռուի համար, այդպիսին հեշտութեամբ կարող է դուրս գալ բազմատեսակ դժուար ու ծանր պարագաներից, զանազան փորձութիւններից ու վտանգներից, որոնցով լիքն է մարդկային կեանքը։ Գիտութիւնը մարդուն տալիս է իշխանութիւն՝ արտաքին բնութեան վերայ իշխելու և մարդկանց վերայ ազդելու։

Գիտնական ու լուսաւորուած մարդը աւելի շուտ կարող է գտնել միջոց մերձաւորին օգնելու և նրա թշուառութեան ժամանակ բարի խորհուրդ տալու խրախուսելու ու մխիթարելու, քանթէ տգէտ ու անկիրթ մարդը։ Բաղդաւորութեան ժամանակ գիտութիւնը, և առ հասարակ կրթութիւնը, մարդու համար ծառայում է իբր զարդ և իբրև ազբիւր բարձր վայելքների, չխօսելով նրա գործնական կարևորութիւնների մասին, իսկ անբաղդութեան ժամանակ գիտութիւնը նրա զօրավիգն ու մխիթարիչն է լինում։

կրթութիւնը հարուստ մարդուն ընդունակ է դարձնում խելացի կերպով գործադրելու իր հարստութիւնը թէ իւր սեփական և թէ ուրիշ մարդկանց կեանքը լաւապէս կազմակերպելու համար։ Իսկ աղքատին նա կարողութիւն է տալիս ազնիւ աշխատանքով իր կեանքի համար միջոցներ գտնելու։ Աշխարհումս չկայ մի այնպիսի փայլուն ու հրաշալի դրութիւն, որը կրթութիւնից, այսինքն զանազան գիտութիւններ ուսանելուց, չստանար միանգամայն նոր փայլ։ Եթէ մենք կամենայինք մի առ մի հաշուել կրթութիւնից առաջ եկած անթիւ բարիքները, հաւատացէք, որ այդ մեզանից շատ երկար ժամանակ կխլէր։ Ականաւոր և ամենից առաւել եկեղեցուց յարգուած սուրբ հայրերի և ուսուցիչների մեծամասնութիւնը բարեպաշտութիւնից յետոյ առաջին տեղն են տալիս ուսումնականութիւնը և կրթութիւնը, որը ձեռք բերելու համար նրանք երկար ու եռանդագին աշխատեցին։

Այսպէս, սուրբն Բարսեղ հայրապետը վաղ մանկութիւնից նուիրել էր իրան զանազան գիտութիւնների ուսումնասիրութեան։

Հասնելով երիտասարդութեան հասակին՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար նա ուղևորուեց դէպի այն քաղաքները, որ այն ժամանակ հռչակ էին վայելում իրանց ուսումնարաններով։ Այս նպատակով այցելեց Կապադովկիայի

Կեսարիա քաղաքը, յետոյ Կոստանդնուպոլիս և վերջապէս Աթէնք, որոնք այն ժամանակուայ կրթութեան կենդրոններն էին։ Աթէնքն այն քաղաքն էր, որին Գրիգոր Աստուածաբանը իւր գովասանական ճառի մէջ, ուղղած սուրբն Բարսղին, անուանում է «Գիտութիւնների կենդրոն»։ Ահա այստեղ սկսուեցաւ այդ լուսաւորիչների սերտ բարեկամութիւնը, որը մինչև նրանց կեանքի վերջը մնաց անփոփոխ։ Նրանք սովորելով Աթէնքում, երբէք հաճոյքի հրապոյրով չյափշտակուեցան, որոնցով հարուստ էր այն ժամանակուայ երիտասարդութեան անօրինակելի ու գոյի կեանք վարող բազմամարդ և աղմկալի Աթէնք քաղաքը։ Գրիգոր Աստուածաբանը ասում է. «Մեզ յայտնի էին միայն երկու ճանապարհ. մէկը, որ առաջինն և ամենաընտիրն էր, տանում էր մեզ մեր սուրբ տաճարները և մեր այնտեղի ուսուցիչների մօտ. միւսը՝ որ երկրորդ ճանապարհն էր, տանում էր մեզ աշխարհային գիտութեանց դասախօսարանների մօտ։ Իսկ այլ ճանապարհները՝ ինչպէս են տօնները, թատրոնները, ժողովրդի համախմբումները, խրնճոյքները, մենք թողնում էինք ցանկացողներին. որովհետև ուշադրութեան արժանի չէինք համարում այն, ինչ որ չի տանում դէպի առաքինութիւն և չի լաւացնում իւր սիրողներին»։ Զնայելով նրանց այդպիսի վարած խիստ կեանքին ու նրանց՝

դէպի գիտութիւնը ունեցած վախապին, երկու բարեկամներ ցոյց տուին գիտութեան մէջ մեծագոյն յառաջադիմութիւն։

Գրիգոր Աստուածաբանը սուրբն Բարսղի մասին խօսելիս հարցնում է. «ո՞վ էր արդեօք աւելի լաւ հասկանում փիլիսոփայութիւնը. այն փիլիսոփայութիւնը որ յիրաւի բարձրագոյն է թէ գործնականապէս և թէ տեսականապէս. նմանապէս և նրա այն մասը, որ զբաղւում է դրամաբանական ապացոյցներով, հերքումներով ու գիտական վէճերով և կոչւում է բանակաբեր։ Աւելի հեշտ էր Լաբիրինթոսից դուրս գալը, քան թէ խուսափելը նրա ապացոյցների ցանցերից, երբ նա այդ ապացոյցները կարևոր էր համարում։ Աստղաբաշխութիւնը, երկրաչափութիւնը և թուաբանական գիտութիւնները նա ուսումնասիրել էր, որպէսզի այս գիտութիւնների մէջ առաւել հմուտ եղող անձինք չկարողանային նրան շփոթեցնել։ Նրա թոյլ առողջութիւնը և իր հիւանդութիւնների ապաքինումը հարկադրեցին նրան բժշկականութիւնն էլ ուսումնասիրել և այս հանգամանքների շնորհիւ գիտութեան այդ ճիւղն էլ սովորեց»։

Գրիգոր Աստուածաբանն էլ, Մեծն Բարսղի նման, գիտութեան ջերմ սիրահար էր. նա իւր կեանքի մասին գրած բանաստեղծական պատմութեան մէջ ահա թէ ինչ է ասում. «Դեռ իմ

բեխերը դուրս չեկած ես արդէն գիտութեանց քացավառ սիրով յափշտակուած էի. այդ նպատակով ես աշխատեցի նախ՝ հարստացնել իմ միտքը արտաքին, այսինքն աշխարհային ուսմունքներով, որպէսզի կարողանայի գործածել իբրև օժանդակիչ միջոց ճշմարիտ լուսաւորութեան համար. և երկրորդ՝ որպէսզի մարդիկ իրանց ունայն ու դատարկ պերճախօսութեամբ, որ միայն բաղկացած է լինում քաջահնչիւն բառերից, չափազանց չհպարտանային իմ աւելև և իրենց ճարտարախիւս սովիստութիւններով չկարողանային ինձ կապել ու կաշկանդել»։ Նա մի ուրիշ տեղ ասում է՝ «ինձ գրաւողը գիտութեանց մէջ գերազանց հանդիսանալու միակ փառքն էր, որոնցով հարուստ էր արևելքը, արևմուտքը և գեղանի Հելլադան։ Աթէնքը և այս բանի վերայ երկար ժամանակ ես եռանդուն կերպով աշխատեցի։ Բայց իմ բոլոր գիտութիւնները դրի Քրիստոսի գաղշապարի տակ, հնազանդեցնելու նրանց Բարձրելոյն խօսքին, որը նահանջում է մարդկային մտքի ամեն տեսակ գաղափարներն ու խօսքը։ Հարստութիւնը, ծագման վեհմութիւնը, փառքը, իշխանութիւնը և այն ամենը, ինչ որ մարդկանց անփառութիւնն է շռայլում և աշխարհային ունայն հաճոյք է պատճառում, և որը նման է երազի,—այդ բոլորը Թողի ցանկացողներին։ Իսկ ինձ՝ միայն գիտու-

թիւնը ու պերճախօսութիւնը, որոնց ձեռք բե-
րելու համար ամեն զոհողութիւն յանձն առի,
յոգնածութիւն և վտանգ կրելով թէ ցամաքի և
թէ ծովի վերայ: Գիտութիւնը ու պերճախօսու-
թիւնը ես համարեցի և այժմ էլ համարում եմ
մեր ակնկալած ալքայութիւնից յետոյ ամենա-
գլխաւոր բարիքը»: Գրիգոր Աստուածաբանը
Բասեղ Մեծի մասին գրած գովասանական ճառի
մէջ միևնոյն միտքն է արտայայտում հետևեալ
կերպով. «Ես կարծում եմ, որ իւրաքանչիւր խե-
լացի մարդ կհամաձայնի, թէ գիտութիւնը բա-
րիքներից ամենաառաջինն է, որ մենք կարող
ենք ունենալ: Ես խօսում եմ ոչ թէ միայն այն
բարձր գիտնականութեան մասին, որը արհամար-
հում է ոճի գեղեցկութիւնը ու լեզուի նրբու-
թիւնը և որ ի նկատի ունի միայն հոգւոյ փըր-
կութիւնը և երկնքի ալքայութիւնը, այլ և ես
խօսում եմ այն արտաքին գիտնականութեան
մասին, որը քրիստոնեաներից շատերը մերժում
են, որովհետև իրանց ուղիութեամբ համարում
են իբրև Աստուածանից հեռացնող վտանգաւոր
ցանց: Այն մարդկանց մոլորութիւնը, որով նրանք
Աստուծոյ արարածներին յարգանք են մատու-
ցանում, փոխանակ ճշմարիտ Աստծուն, որին
միայն վայել է, չպէտք է նողկանք յարուցանէ
մեր մէջ, երկնքի, երկրի, օդի և նրանց մէջ պա-
րունակուղ բոլոր իրերի դէմ: Ընդհակառակը՝

մենք բնութիւնից քաղում ենք այն ամենը, որը
կարող է ծառայել մեզ իբրև մեր կեանքի հովա-
նին ու զարդը, և խուսափում ենք միայն նրա-
նից, ինչ որ մեզ կարող է վնասել: Մենք իսկի
մտադիր չենք նմանելու այն անմիտներին, ո-
րոնք արարածը դարձնում են Արարչի դէմ.
նրան մենք ճանաչում ենք արարչագործութեան
մէջ և ըստ առաքելոյն, թէ, «ես գերեմք զամե-
նայն միտս ի հնազանդութիւնն Քրիստոսի»:
Մենք գիտենք, որ կրակը, ուտելիքը, մետաղ-
ները, ինքն ըստ ինքեան ոչ բարի են և ոչ չար,
որ ամեն ինչ կախումն ունի նրանց գործածու-
թիւնից և մինչև անգամ սողուններից էլ մենք
ստանում ենք փրկարար դեղեր:

Ահա այս կերպով մենք նոյնպէս աշխարհիկ
գրականութիւնից ու գիտութիւններից քաղում
ենք իրերի բնութեան մասին հետազոտութիւն-
ներ ու մտաւոր տեսութիւններ. բայց մերժում
ենք այն ամենը, որը տանում է մեզ չարութեան,
մոլորութեան ու կորստեան անդունդը: Մենք
նրանցից օգուտներ ենք քաղում հէնց նոյն իսկ
բարեպաշտութեան վերաբերմամբ, որովհետև
ճանաչելով նրանց թերութիւնները՝ մենք հաս-
նում ենք գիտութեան կատարելագործման ամե-
նաբարձր աստիճանին և նրանց թուլութիւնից
օգտուելով՝ մենք մեր վարդապետութիւնը ամ-
րացնում ու հաստատում ենք: Ուստի չպէտք է

ստորացնել գիտնականութիւնը, ինչպէս ոմանք անում են, այլ ընդհակառակն, անմիտ ու տգէտ պէտք է համարել նրանց, որոնք այդ կարծիքին են և կցանկանային, որ ամենքին իրանց նման տհաս լինէին, որպէսզի ընդհանուրի պակասութեան մէջ ծածկեն իրանց սեփական պակասութիւնները ու խուսափեն տգիտութիւնը երևան հանելուց: Այն մարդիկ, որոնք հոգս են քաշում միայն իրանց բարօրականութիւնը լաւացնելու, իսկ իրանց միտքը գիտութիւններով լուսաւորելու անփոյթ են, և կամ նրանք, որոնք մի միայն գիտութիւն են փնտրում, իսկ իրանց բարօրական ու անձնական կատարելութեան մասին չեն աշխատում, այդպիսինները ինձ թւում է, թէ նման են շիլ մարդկանց, որոնք տեսնում են ամեն ինչ ծուռ և չեն կարող ոչ ոքի հաճոյանալ: Բայց Գրիգոր Աստուածաբանը մի առանձին թափով գիտութեան ու լուսաւորութեան մասին սաստիկ սէր է արտայայտում իր բանաստեղծական արտադրութիւնների մէջ: Կայսրութեան բարձրաստիճան անհատներից մէկը, Նիկովուլ, որը Գրիգոր Աստուածաբանի ազգականն ու ընկերն էր, ունէր մի որդի նոյնպէս Նիկովուլ անունով, որը բուռն ցանկութիւն ունէր գիտութիւններ ուսումնասիրելու: Որպէսզի նրան կարողութիւն տան գիտութեան այդ ազնիւ ծարաւը յագեցնելու, Գրիգոր Աստուածաբանը մի ոտանաւորի մէջ,

որ գրուած էր լուսաւորութեան նախանձախնդիր պատանու անունով, աշխատում է համոզել Նիկովուլի հօրը, որ նա ուղարկի պատանուն այն ժամանակուայ ամենալաւ ուսուցիչներից մէկում ուսանելու: Ոտանաւորի մէջ այսպէս էր ասուած. «Ես չեմ ցանկանում ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ միտաքսեայ զգեստաւորներ, ոչ վայելուն շլացուցիչ ու թանկագին քարեր, ոչ ընդարձակ դաշտեր, նման այն դաշտերին, որ վարելիից նեղուսը ոտոզում է, ոչ ծառանների բազմութիւն և ոչ էլ անասուններուի բազմաթիւ հօտեր: Ինձ չի հրապուրում բարձր դիրք ունենալու կախարդանքը... Թէև մարդիկ շատ բանով հիանում ու հպարտանում են. բայց, ճշմարիտն ասած, ողորմելի է մահկանացուների սիրը: Նրանք վաղուայ համար չունեն ոչ մի վրտատեղի ու հաստատուն բան. վաղանցիկ բաւականութիւնները, որ անմահ հոգու համար օտար են, նրանց գոռոզացնում են ունայն հպարտութեամբ: Այն ամենը, ինչ որ սովորաբար ամենից աւելի է գնահատւում կեանքի մէջ, արագ անցնում ու անյայտանում է որպէս փոշի, որին ուժգին ու կատաղի հողմը քշում տանում է մերթ այս և մերթ այն կողմը...:

Ես ցանկանում եմ միայն մի բան, որ նախապատուում եմ բոլոր մնացեալներից, այն է՝ գիտութեան և խօսքի զօրութիւնը: Զարմանալի

է այն կրակոտ ճառի ոյժը, որ արտասանուում է հասարակական ժողովներում, դատական ատեանների դատաւորների առաջ և գովասանական խօսքերի մէջ: Պատմական գիտութիւնները մարդի համար նոյնպէս կազմում են մի անգին գանձ, որովհետև պատմութիւնը պարունակում է իւր մէջ ազգերի միացած իմաստութիւնը և բազմաթիւ սերունդների հաւաքած մարդերը: Մենք չպէտք է արհամարհենք նոյնպէս քերականութիւնը, որը մեր խօսակցութիւնը դարձնում է ուղիղ ու գեղեցիկ.—մի խօսքով նա մեր լեզուի ամենալաւ օգնականն է: Ոոյժ կարևոր է նոյնպէս ձեռք բերել դրամաբանական գիտութիւն և համութիւն դատողութիւնների բանակռուի մէջ, որոնց մէջ ճշմարտութիւնը ծածկուած է լինում, իսկ հետազօտութիւններից յետոյ պարզուում է: Ոչ սակաւ ուշադրութեան արժանի են նոյնպէս բարոյականութեան վերաբերեալ ուսմունքը... և այն գիտնականների աւենամեծ խնամքով հետազօտութիւնները, որոնք միջամուխ եղան բնութեան գաղտնիքներին և լոյս ընծայեցին իրանց աշխատանքի արդիւնքը: Նրանք աշխատեցին ուսումնասիրել ամբողջ բնութիւնը, ինչ որ գոյութիւն ունի օդի մէջ, երկրի վերայ, ովկիանոսում և երկնքում: Նամանաւանդ նրանց ուշադրութիւնը առաւել գրաւեց Գերագոյն էակի Բանականութիւնը: Նրանք գլխաւորապէս ձգտում էին

բանալ Տիեզերքը կառավարող Նախախնամութեան նպատակները և ուղին, աշխատում էին հասկանալ թէ ինչ կերպով պիտի վերջնայ ստեղծագործութեան հրաշալի ներդաշնակութիւնը: Եւ երբ նա գիտութիւնների այս դասընթացքը անցնում, դրանից յետոյ նա ինձ կնուիրեմ ուսումնասիրելու Աստուածային Ցայտնութիւնները, որը Սուրբ Հոգու միջոցով ծածուկ ու խորհրդաւոր կերպով հաղորդուած է մեզ: Ես կգնամ նրա վարդապետութեան լոյսի ետևից, աստիճանաբար կմօտենամ նրա լոյսին և իմ կեանքը կյարմարեցնեմ նրա Աստուածային պատուէրներին»: Ոաջնաւորի վերջում պատանին խնդրում է իր հօրը՝ չփակել իր համար գիտութեան աղբիւրը, չթողնել, որ ձէթի պակասութեան պատճառով հանգչի բոցը, չլինի թէ բոյսը բեղմնաւորիչ ցօղից զրկուելով, թառամէ: Գրիգոր Աստուածաբանը, Նիկովուլի հօր անունով յօրինած ոաջնաւորի մէջ՝ պատանու խնդրին տալիս է հետևեալ բովանդակութեամբ պատասխան. «Որդեակ իմ, կարելի չէ ցանկանալ ոչինչ առաւել գեղեցիկ բան, քան կրթութիւնը: Ես ինքս էլ սէր եմ տածում դէպի գիտութիւնը: Տէրը մանկանացուներին տուել է այդ իւր բարձր և ամենաթանկագին շնորհներից մէկը, որպէսզի նա նրանց կեանքի լոյսը լինի: Իմ կարծիքով, գիտութիւնն այս աշխարհի բարիքներից

1908 35-468 3969

առաջինն է. նա իւր մէջ պարունակում է հարստութիւն, որ կարող չէ երբէք գողացուել: Ես իմ գիտութեան փառքը ամենից առաւել համ գերադասում... գիտութիւններով զբաղուող մարդը ինքն իրանից զոհ է: Փայլուն գիրք վիճառող մարդիկ անշուշտ կգանեն գիտական զբաղմունքների մէջ գեղեցկագոյն պահ, որը չի կարող թառամել գարնան այն ծաղիկների նման, որոնք առաւօտը բացած լինելով, երեկոյեան դեռ արևը մայր չմտած թառամում են: Տանջուող ու տառապող մարդու համար կրթութիւնը ամենալաւ բժշկութիւնն է... Ես ինչքան էլ աշխատելու լինեմ, անկարող եմ ըստ արժանւոյն գովաբանել գիտութիւնն այնպէս, որ իմ խօսքը համապատասխան լինէր նրա փառքին ու մեծութեանը»:

Սրանից պարզ երևում է, որ ինչպէս գրագիտութեան արհեստը սովորելու, այնպէս էլ միւս գիտութիւնները ձեռք բերելու համար յարմար են մանկութեան ու պատանեկութեան հասակները: Ուրեմն ի նկատի առնելով տիեզերական մեծ ուսուցիչների և լուսաւորիչների այս խրատները և տեսնելով թէ նրանց կենդանի օրինակը և թէ Աստուծոյ միւս սրբերի բազմաթիւ օրինակները, որոնք հռչակուել են որքան կեանքի արդութեամբ, այնքան էլ գիտութեամբ՝ լսեցէք և հետևեցէք և մեր այս առաձնելին կեն-

դանի վկաներ կարող են լինել նրանց անմահ երկասիրութիւնները: Ձեր հասակի և ձեր կեանքի պայմանների համեմատ, որքան կարող էք, աշխատեցէք նմանել այդ օրինակելի և բարձր անձանց: Անդուլ հետևողով և տոկունութեամբ զբաղուեցէք գիտութիւններով, մտաբերելով, որ այս ճանապարհով միայն կարելի է հասնել կեանքի մէջ առաւել հաստատուն բարիքների, և այդ բարիքները գիտութեամբ զբաղուողների ձեռքից կարող չեն խլել ոչ մարդկային չարութիւնը ու նախանձը, ոչ կեանքի այլանդակութիւնները և ոչ էլ նոյն իսկ մահը:

Բայց որքան էլ բարիքները մեծ լինին, որ առաջ են գալիս մարդուս մտքի գիտութիւններով հարստանալուց, իմացէք, որ կրթութեան նպատակը ձեռք է բերուում մի միայն աշակերտի կամքի կանոնաւոր ուղղութեամբ: Մտքի լուսաւորութիւնը միայն այն ժամանակ կարող է ճշմարիտ լինել, երբ նա միացած է լաւ բարոյականութեան հետ:

«Ձի յանձն չարարուիստ իմաստութիւն ոչ մտանէ», ասում է Սողոմոն իմաստունը (գիրք իմաստ. 1 գլ. 4), իսկ սուրբն Ոսկեբերան ասում է. «Գիտութիւնների յաջող պարապմունքի համար, անհրաժեշտ է լաւ բարոյականութիւնը: Կարելի է առանց գիտնականութեան լինել բարձր բարոյականութեան տէր, բայց անկարդ կեանք

վարելով ոչ ոք կարող չէ ձեռք բերել գիտնականութիւն։ Ուրեմն պահպանեցէք բարձր բարոյականութեան այն անգին գանձը, որը յիրաւի ձեզ է պատկանում, որովհետև գնում է ձեր հոգու մէջ։ Դուք զարդարեցէք նրան գիտական տեղեկութիւններով, խաւսափեցէք այն բանից, որը արող է վնասել ու խաւարեցնել ձեր մաքուր հոգին։

Գալով ձեր առաջնորդներին ու դաստիարակներին, աշխատեցէք միշտ լինել յարգող, հնազանդ և անկեղծ։ Դուք ձեր մէջ պահեցէք ընկերասիրութիւնը, բարեացակամութիւնը, փոխադարձ ներողամտութիւնը ու քաղաքավարութիւնը. ընդհանրապէս ամենքի հետ եղէք ճշմարտասէր, անկեղծ ու քաղաքավարի։ Ձեր մէջ թող լինի բարի նախանձ մի միայն գիտութիւններով զբաղուելու և բարի վարուց հետևելու։ Այսպէս վարուելով, դուք ձեռք կբերէք Աստուածանից շնորհք և մարդկանցից էլ սէր։

Լոյս տեսան և վաճառւում են մեր հետևեալ թարգմանութիւնները.

I «Ինչու՞ համար է կեանքը»—Լէօն-Դէնի—10 կ.
II «Աղճի դատաստանի առաջ»—Գր. Պետրով 10 կ.
III «Գայտներական մատանի»—Լ. Մուրաթխնի
ր. տպ. . . . 15 կ.
IV «Կրթութեան նշանակութիւնն ու օգուտը»—
Բօրիս վարդ. . . . 15 կ.
V «Վերադարձ դէպի հայրենիք»—Կոնան-Դոյլի
Բ. տպ. . . . 20 կ.
VI «Բարոյական դաստիարակութեան հարցի շուրջը»—Ն. Սօկ. . . 25 կ.
VII «Բարեկամական խորհուրդներ նորատի օրիորդներին» Ա-բան դօկ. Ճօն Միլլերի . . . . 30 կ.
VIII «Գիտութեան ձայնը Ա-ծոյ գոյութեան մասին հեղ. Կուրքէի . . 35 կ
IX «Գիտական զրոյցներ» (այլ և այլ նշանաւոր հեղինակների) . . 60 կ

ՀՀ Ազգային գրադարան
NL0051256

Գինն է 15 կոպ.

Թարգմանչի հասցէն՝
Нахичевань на Дону, 25 линія, д. № 29.
Свящ. Н. Боснакіанцъ.